

Պ-342-30.09.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՐ
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵՒՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. "Հարկերի մասին" Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 8. Հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կամ ՀՀ օրենքների նման դրույթները կարող են գործողության մեջ դրվել այդ օրենքները ընդունելու տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վեցերորդ ամսի 1-ից:

Այն դեպքում, երբ հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքը չի ընդունվել մինչև ընթացիկ տարվա ավարտը, ապա հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները կամ ՀՀ օրենքների նման դրույթները կարող են գործողության մեջ դրվել ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ շուտ քան այդ օրենքների պաշտոնական հրապարակումից հետո վեցերորդ ամսի 1-ից:

Հարկի դրույքաչափի բարձրացման և նոր հարկատեսակի սահմանման վերաբերյալ սույն հոդվածի դրույթները չեն տարածվում տեղական հարկերի վրա:

___ Հարկի դրույքաչափի իջեցում, հարկատուների գործելու պայմանների մեղմացում, հարկի վերացում նախատեսող օրենքները կամ ՀՀ օրենքների նման դրույթները կարող են գործողության մեջ դրվել այդ օրենքների ընդունման տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, եթե այդ օրենքներով այլ ժամկետ սահմանված չէ:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագծի վերաբերյալ առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Երկրորդ պարբերությունը վերախմբագրել այնպես, որ հարկի դրույքաչափի բարձրացում, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքներն ուժի մեջ մտնեն ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, իսկ գործողության մեջ դրվեն նախագծի հեղինակների կողմից առաջարկվող կարգով և ժամկետներում:	Ընդունված է	Նախագիծը վերախմբագրվել է առաջարկությանը համապատասխան:
ՀՀ կառավարություն	Երրորդ պարբերությունում սահմանել նաև, որ հարկի դրույքաչափի իջեցում, հարկ վճարողների գործելու պայմանների մեղմացում կամ հարկի վերացում նախատեսող օրենքներն ուժի մեջ մտնեն ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն կիրառվեն այդ օրենքներն ընդունելու տարվան հաջորդող ֆինանսական տարվա սկզբից, եթե այդ օրենքներով այլ ժամկետ սահմանված չէ:	Ընդունված է	Նախագիծը վերախմբագրվել է առաջարկությանը համապատասխան
ՀՀ կառավարություն	Նախագծով սահմանել, որ դրանով առաջարկվող դրույթները չեն վերաբերում տեղական հարկերին	Ընդունված է	Լրացված է նոր պարբերություն
ՀՀ կառավարություն	Նախագծերի վերնագրերում «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով:	Ընդունված է	Նախագիծը խմբագրված է
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակումից հետո» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող» բառերով:	Ընդունված է	Նախագիծը խմբագրված է